

**ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳԻՍԻ
ՀԱՄԲԱՐՅԱՆ**

Երաժշտագետ, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող
E-mail. hambaryan.hasmik@gmail.com

**ԱԼԵԿՍԱՆԴԻՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ «ՀԱՏԸՆՏԻՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ»
ԸՍՏ ՎԻԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԴԱՇՆԱԿԱՀԱՐՆԵՐԻՆ**

Ա. Սպենդիարյանի սիմֆոնիկ նվագախմբի գույների վարպետ, երգեցիկ ձայների բազմազան հնչերանգների կամերային և օպերային կյանք տված կոմպոզիտորի արվեստում դաշնամուրային երաժշտությունը համեմատաբար օժանդակ դեր ունի: Կոմպոզիտորի վախճանից հետո 90 տարվա ընթացքում այդ բացը լրացվել է 2 անգամ: 1950-ին Գևորգ Բուդաղյանի խմբագրությամբ հրատարակված «Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածու»-ի 9-րդ հատորում տեղ են գտել կոմպոզիտորի սիմֆոնիկ ստեղծագործությունների իր իսկ դաշնամուրային փոխադրումները 4 ձեռքի համար: Հաջորդ անգամ՝ 1974-ին, «Հայկական պարերի դյուրացված փոխադրումներ»-ը դաշնամուրի համար կատարել է Էդվարդ Բաղդասարյանը՝ ժողովրդական և հայ կոմպոզիտորների ստեղծած պարերի շարքում ընդգրկելով «Էնգելի»-ն՝ «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ սյուիտից և «Տղամարդկանց պարը»՝ «Ամաստ» օպերայից: Սպենդիարյանի ստեղծագործությունների դաշնամուրային տարբերակը կատարողներին և երաժշտասերներին հասանելի դարձնելու նպատակն այս անգամ կյանքի է կոչվել 2018-ին կոմպոզիտորի տուն-թանգարանի նախաձեռնությամբ: «Ալեքսանդր Սպենդիարյան Հատընտիր՝ դաշնամուրային փոխադրում» Վիլլի Սարգսյանի առաջաբանով, թարգմանություններով, եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) նոտային ժողովածուն, որը լույս է տեսել երաժշտության մի խումբ նվիրյալների ջանքերով:

Նախապես ընտրվել է սպենդիարյանական արվեստի 10 գոհար՝ վոկալ-կամերային [«Այ վարդ», «Արևելյան օրորոցի երգ», «Մի լար, բլբուլ», «Օրորոցային» (Ղրիմի թաթարների երգ), «Ղարիբ բլբուլ» (Սայաթ-Նովայի երգերից), «Առ սիրուհիս» (հայկական ժողովրդական երգ), սիմֆոնիկ («Երգ մկնիկի մասին»՝ «Ղրիմյան էսքիզներ» սիմֆոնիկ սյուիտից), օպերային («Աղջիկների պարը», «Տղամարդկանց պարը» և «Պարսկական քայլերգը»՝ «Ամաստ» օպերայից) ժանրերից: Փոխադրումների հեղինակը և ժողովածուի


կազմողը դաշնամուրային արվեստն իր էության հետ նույնացրած երաժիշտ, ՀՀ վաստակավոր արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր Վիլլի Սարգսյանն է. հիշեցնենք, որ այսպիսի անդրադարձը հայ մեծերին նրա համար նորություն չէ. մինչև այդ հրատարակվել են Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Վ. Բայանի ստեղծագործությունները իր իսկ փոխադրումներով:

Ժողովածուի մասնագիտական խմբագիրն է դաշնակահար, կոմպոզիտոր, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավանեսովը: Խմբագրի ներածականից բացի այստեղ նա անգլերեն ներկայացրել է Սպենդիարյանի երգերի և ռոմանսների բանաստեղծական տեքստերը յուրօրինակ գեղարվեստական թարգմանությամբ:

«Հատընտիր»-ը լույս է տեսել «Կոմիտաս» հրատարակչությունում, տնօրեն Ռուզաննա Եսայանի՝ ստեղծագործական գործընթացին ոչ պակաս հետևողական մասնակցությամբ: Հրատարակման աջակիցներն են կոմպոզիտոր Վլադիլեն Բայանը, երաժշտագետ Արմեն Բուդաղյանը և փիլիսոփա դոկտոր Կարեն Սվալայանը (Շվեյցարիա): Եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ժողովածուն հասանելի է հայ և այլագրի երաժիշտներին՝ նպաստելով հայկական դասական երաժշտության տարածմանը: «Հատընտիր»-ն առանձնանում է նաև գեղարվեստական լուծումով, ձևավորմամբ. նոտաներին կցված են լուսանկարներ՝ կոմպոզիտորի մի քանի դիմանկար, ծաղրանկար, նրա Յալթայի առանձնատան հեռուստահաղորդումների նկարներից, ժողովածուում ընդգրկված են ստեղծագործությունների անդրանիկ հրատարակությունների տիտղոսաթերթեր, հատվածներ նամակներից և այլն:

Վիլլի Սարգսյանի փոխադրումներն առանձին անդրադարձի և ուսումնասիրության հիմք են տալիս: Հեղինակը, մի կողմից հարազատ է մնում կոմպոզիտորի ոճին, ժամանակաշրջանի ոգուն և այդ ամենը փոխանցում է կատարողներին: Մյուս կողմից՝ երաժշտական լեզվում առավելագույն ընդգծում է դաշնամուրային ֆակտուրայի առանձնահատկությունները՝ հետ չմնա-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Օլյա Յուրիի Նուրիջանյանի ընդունվել է տպագրության՝ 30.05.2019 թ. ներկայացրել է հեղինակը՝ 10.01.2019 թ.



Վիլի Սարգսյան, Արմեն Բուդաղյան



Արթուր Ավանեսով, Վիլի Սարգսյան



Վլադիլեն Բալյան, Արթուր Ավանեսով, Արմեն Բուդաղյան, Վիլի Սարգսյան, Մարինե Օթարյան

յով ժամանակակից կատարողական միտումներից: Արևելքի ու Արևմուտքի գեղագիտական միաձուլումը Սպենդիարյանի ընկալմամբ, դասական և ժամանակակից մտտեցումների համադրումը մեծ պատասխանատվություն է այն դաշնակահարների համար, որոնք պետք է կատարեն տվյալ փոխադրումները՝ տեխնիկական հմտություն, ոճի և կերպարների խորքային բացահայտում, ապա և՛ վերարտադրում: Երաժշտական ձևակառուցման և նյութի մշակման տեսանկյունից էլ փոխադրումներն աչքի են ընկնում օրինաչափ սկզբունքներով. սկզբնական կերպարը թե՛ մեղեդային գծում, թե՛ նվագակցության մեջ իմիտացիոն պոլիֆոնիկ արձագանքներով, հարմոնիկ և ռիթմիկ տարբերակումներով, ռեգիստրների աստիճանական ընդլայնմամբ հասնում է զարգացման գագաթնակետին և ռեպրիզում ներկայանում արդեն նոր իմաստավորմամբ, ասես հայտնվում զգացումային և փիլիսոփայական նոր ալիքի վրա:

Դաշնամուրային գրականության մեջ բացառիկ այս ժողովածուն 1-ին անգամ ներկայացվեց նոյեմբերի 29-ին ԵՊԿ բուհական գիտաժողովին՝ պրոֆեսոր Ա. Բու-

դաղյանի կողմից: Ձմռան առաջին օրն էլ Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի դահլիճում կայացավ շնորհանդեսը, որին ներկա էին Մ. Սարյանի տուն-թանգարանի ֆոնդապահ, Ղազարոս Սարյանի դուստր Սոֆիկ Սարյանը, ԵՊԿ պրոֆեսորներ Վիլի Սարգսյանը, Արմեն Բուդաղյանը, Ալինա Փահլևանյանը, ՀԵԸ նախագահ Դավիթ Ղազարյանը, ՀԿՄ նախագահ Արամ Սարյանը, Վլադիլեն Բալյանը, Արթուր Ավանեսովը, դաշնակահարներ Նարինե Խաչատրյանը, Մարգարիտ Սարգսյանը, Սահենիկ Մաղաքյանը, Ռուզաննա Եսայանը, տարբեր երաժշտական կրթօջախների ներկայացուցիչներ: Մասնակիցներին ողջունեց և ժողովածուի ստեղծման պատմությունը ներկայացրեց թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը: Իրենց տպավորությունները և անկեղծ ուրախությունը ժողովածուի հրատարակման առթիվ հայտնեցին շնորհանդեսի պատվավոր հյուրերը, իսկ Ա. Ավանեսովն ու Վ. Սարգսյանն իրենց կատարումներով առավել ջերմացրին դահլիճի մթնոլորտը՝ հնչեցնելով մի քանի փոխադրում: Ա. Բուդաղյանը ներկայացրեց նաև ԵՊԿ դոցենտ Ս. Մաղաքյանի՝ վերջերս հրատարակված «Հայաստանի կոնցերտմայստերները» հիմնարար աշխատությունը, որտեղ մի առանձին գլուխ նվիրված է Ա. Սպենդիարյանին:

Շնորհանդեսին Մ. Օթարյանը գլխավոր «մեղավոր» Վ. Սարգսյանին շնորհեց յուրօրինակ պարզ և՛ թանգարանի 50-ամյակի առթիվ թողարկված հուշանշան: Վաստակաշատ մանկավարժի ու բազմաշնորհ դաշնակահարի մասնակցությամբ սպասվում է նոր «սխրագործություն», այս անգամ լինելու է Ռոմանոս Մելիքյանի «Ջմրուխտի» երգաչարի դաշնամուրային փոխադրման հրատարակությունը:

Տ. Գ. – Կապասենք Սպենդիարյանի հատընտիր փոխադրումների նոր ու հետաքրքրական մեկնաբանություններին՝ տարբեր դաշնակահարների կատարմամբ:

Քանալի-քառեր. Ա. Սպենդիարյան, Կոմիտաս, Վիլի Սարգսյան, Ա. Ավանեսով, Մ. Օթարյան, Գ. Ղազարյան:

Ключевые слова: А. Спендиаров, Комитас, В. Саркисян, А. Аванесов, М. Отарян, Д. Казарян.

Keywords: A. Spendiaryan, Komitas, Villi Sargsyan, A. Avanesov, M. Otaryan, D. Ghazaryan.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍԻ (ծ. 31.10.1984թ., ք. Երևան), երաժշտագետ, լրագրող: 2008թ. ավարտել է Կոմիտասի անվ. ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (պրոֆեսոր Ս. Բ. Ամատունու մասնագիտական դասարան): 2008-2009 թթ. «Հայրենիք» հեռուստաընկերության «Մեղեդի» հաղորդաշարի շրջանակներում հանդես է եկել որպես օգնական: 2009-2012 թթ. աշխատել է ԵՊԿ հրատարակչությունում՝ որպես «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր: 2009թ-ից սկսած հեղինակել է երաժշտական և մշակութային թեմաներով մի շարք վերլուծական և տեղեկատվական հոդվածներ, հարցազրույցներ երաժիշտների և մշակութային գործիչների հետ, երաժշտական գրքերի գրախոսականներ, որոնք հրատարակվել են «Երաժիշտ» ամսաթերթում, «Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագրում, «tv ալիք» շաբաթաթերթում, «Ազգ» օրաթերթում, ինչպես նաև մի շարք էլեկտրոնային լրատվամիջոցներում: 2015-2017թթ. աշխատել է «ԿԵՄ» ռադիոյում՝ որպես ձայնադարանի թվայնացման օպերատոր, երաժշտական խմբագիր, դասական և ժամանակակից երաժշտությանը վերաբերող ուղիղ եթերային թողարկումների տեքստերի հեղինակ: 2018թ-ից մինչ օրս աշխատում է Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանում՝ որպես գիտաշխատող:

Сведения об авторе: ГАМБАРЯН АСМИК САРКИСОВНА (р. 31.10.1984г., Ереван), музыковед, журналист. В 2008 г. окончила музыковедческий факультет ЕГК имени Комитаса (класс профессора С. Б. Амадуни). С 2008 по 2009 являлась ассистентом музыкальной передачи “Meghed” в телекомпании “Айреник”. С 2009 по 2012 работала в Издательстве ЕГК как главный редактор ежемесячной газеты “Еражист”. Начиная с 2009 написала ряд аналитических и информационных статей по темам “музыка” и “культура”, интервью с музыкантами и деятелями культуры, обзоры музыкальных книг, опубликованных в ежемесячной газете “Еражист”, научном международном журнале “Еражштакан Айастан”, в еженедельной газете “tv алик”, в ежедневной газете “Азг”, а также в электронных СМИ. С 2015 по 2017 работала в радиоконпании “ВЭМ” как оператор оцифровки фонотеки, музыкальный редактор, автор текстов программ прямого эфира о классической и современной музыке. С 2018 по сей день работает в Доме-музее А. А. Спендиарова как научный сотрудник.

Information about the author: HAMBARYAN HASMIK SARGIS (born 31.10.1984, Yerevan), musicologist, journalist. In 2008 graduated from the faculty of musicology of the YSC (class of professor S. Amatuni). From 2008 to 2009 was the assistant of the TV program “Meghed” at the TV company “Hayrenik”. From 2009 to 2012 worked at the publishing house of YSC as the editor in chief of the monthly newspaper “Yerajisht”. From 2009 starts to write several articles on musical and cultural themes - analytical and informational articles; interviews with musicians and cultural figures; music books reviews, published in the monthly newspaper “Yerajisht”, international science journal “Yerajstakan Hayastan”, weekly newspaper “TV Aliq”, daily newspaper “Azg”, and in the electronic media sources as well. From 2015 to 2017 worked at the radio company “VEM” as an operator of digitization of the music library; music editor; author of the texts of the broadcasting programs about classical and contemporary music. Since 2018 till today works at the house-museum of A. Spendiaryan as a scientific worker.

Րեզյումե

Научный сотрудник Дома-музея А. А. Спендиаряна, музыковед Асмик Саркисовна Гамбарян. - «“Избранные переложения” А. Спендиаряна уже доступны пианистам».

В статье автор представляет и анализирует нотный сборник “А.Спендиарян. Избранные фортепианные переложения”, опубликованный в 2018-м году по инициативе Дома-музея композитора. Презентация состоялась 1-го декабря в Доме-музее. В сборнике нашли место 10 различных произведений А. А. Спендиаряна: вокально-камерные, симфонические, а также танцы из оперы “Алмаст”. Автор фортепианных переложений и составитель сборника - профессор ЕГК Вилли Ваганович Саркисян. Спец. редактор - кандидат искусствоведения, композитор и пианист Артур Аванесов. Содержание сборника представлено на 3-х языках: армянском, русском и английском. В статье анализируются принципы переложений и детали с точки зрения музыкального языка и музыкальных образов, а также в контексте традиций и новаторства данных переложений.

Summary

Scientific worker of House- museum after Alexander Spendiaryan, musicologist *Hasmik Sargis Hambaryan*. - ““Selected arrangements” of A. Spendiaryan are already available for pianists”.

In this article the author presents and analyzes the music book “A. Spendiaryan: selected arrangements for piano” published in 2018, by the initiative of the composer's house-museum. The presentation took place on December 1st, at the House-museum. The collection contains 10 various compositions of A. Spendiaryan vocal-chamber, symphonic, and dances from the opera “Almast”. Author of the piano arrangements and compiler of the collection is professor of YSC, Willy Sarkisyan. The specialist editor is a PhD of Art sciences, composer and pianist, Arthur Avanesov. The content of the music book is represented in 3 languages: Armenian, Russian, and English. In this article the principles and details of arrangements are analyzed from point of view of music language and music characters, and in the context of tradition and innovation as well.